ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09

«28» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **30.11.2022թ.**

2022 թվականի նոյեմբերի 28-ին գումարվեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/ էլեկտրոնային քվեարկություն:

Քվեարկության համար նյութերը նոյեմբերի 28–ին ժամը 15:20–ին հեռակա կարգով ներկայացվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Խորհրդի էլեկտրոնային քվեարկությունը սկսվեց 2022թ.-ի նոյեմբերի 28–ին և ավարտվեց նոյեմբերի 30-ին:

Քվեարկության օրակարգային հարցեր՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. ստուգումների տարեկան ծրագիրը:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023թ. գործունեության ծրագիրը:

Քվեարկությանը մասնակցում էին՝

Վ.Քերոբյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա.Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ն.Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Դանիելյան	– ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա.Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Կ.Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ի նախագահ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու

Է. Էլբակյան - ՀԱՊՀ-ի մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար

Էլեկտրոնային քվեարկության արդյունքները օրակարգային հարցերի վերաբերյալ՝

Վ.Քերոբյանը՝ չի քվեարկել

Ա.Դանիելյան՝ կողմ

Ա. Հարությունյանը՝ կողմ

Լ.Նանուշյանը՝ կողմ

Ն.Տերյանը՝ չի քվեարկել

Ա.Հայրապետյանը՝ կողմ

Կ.Չիլինգարյանը ՝ կողմ

Կ.Սահակյանը՝ կողմ

Է. Էլբակյանը՝ կողմ

Տ. Քեյանը՝ կողմ

Խորհուրդը որոշեց 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. ստուգումների տարեկան ծրագիրը և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023թ. գործունեության ծրագիրը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ Վ.Քերոբյան

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ Գ.Սահակյան

ստորագրություն